

քերը) եւ Թուրքերն իրենց հանրածանօթ
 ոճով նուաճած էին: Այս ամայի գիւղերը
 հայ գիւղեր էին, որոնցմէ մաս մը միայն
 կրկին հայ մնացած է: Միւսները կամ
 մահմետականացած են, կամ նաեւ՝ աւելի
 նուազ՝ եկուոր օտար մահմետականներէ
 բռնուած: Մառիման արդէն կը վերաբերի
 այն մեծ աւազանին, որուն կենտրոնն եղած
 է Օլթի (հին՝ Ուխտիք), եւ որուն վրայ
 կ'իջնային Տայոց նահանգին միւս գաւառ-
 ները, որոնց մէկ մասին հնադոյն անուն-
 ները մնացած են այսօր ալ. այսպէս՝ Պար-
 փլադիւր է արգի Պարփէլ (Կ. Bardus):
 Հոս ալ բոլոր ձորախմբերն իրենց ջրերով
 հայ անուններով մնացած են, թէեւ նոյն-
 պէս թեթեւ աղաւաղմամբ: Յիշեցինք
 Բանակի կամ Բանասկերք (Կ. Panaskert),
 որուն ամփոփումը թրք. Pennek (ինչ-
 պէս կը գրէ նաեւ Զոխ) ինքնին ճանա-
 չելի է. (այս ձեւէն է արգի երբեմն գրուած
 «Փանակ»): Բանջուր կը ճանչցուի՝ եթէ
 նաեւ Կիպիրտի հետ Pandjuret գրենք:
 Անուանց շտաբըուն մէջ վերջին -յուր քար-
 տէսներու վրայ կը գրուի -sor, օրինակի
 համար Karisor եւն, որոնք յայտնի են:
 Զիարդ եւ իցէ Օլթիի աւազանին մասին